

Տարեկան (հերթական) ընդհանուր ժողովի հրավիրման պարտականության մասին.

I. Նախաբան

Բոլոր ընկերությունները պարտավոր են մարտի 1-ից մինչև հունիսի 30-ը (բաժնետիրական ընկերությունների դեպքում ժողովը կարող է հրավիրվել ավելի վաղ քան մարտի 1-ը) ընկած ժամանակահատվածում հրավիրել տարեկան ժողով: Մեկ մասնակից կամ բաժնետեր ունեցող ընկերությունում նման պարտավորությունը ևս առկա է, սակայն տարեկան ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ որոշումները կարող են ընդունվել ընկերության միակ մասնակցի / բաժնետիրոջ գրավոր որոշմամբ: Ընդ որում, Նշված պահանջը չի տարածվում ընկերության (ներառյալ օտարերկրյա) առանձնացված ստորաբաժանումների՝ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վրա:

II. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ

1. Տարեկան ժողովի հրավիրման ժամկետը.

Այսպես «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» (այսուհետ՝ «ՍՊԸ Օրենք») ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հերթական ժողովը պետք է անցկացվի ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատող հերթական ժողովը (այսուհետ՝ «Տարեկան ժողով») պետք է հրավիրվի տվյալ ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, սակայն **ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան 2 ամիս և ոչ ուշ, քան 6 ամիս անց**: Այսինքն, Տարեկան ժողովը պետք է հրավիրվի մարտի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում ցանկացած ժամանակ կամ ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում, որը չի կարող լինել մարտի 1-ից ավելի շուտ կամ հունիսի 30-ից ավելի ուշ:

2. Տարեկան ժողովի բացառիկ իրավասությունները.

ՍՊԸ Օրենքի 36-րդ հոդվածը սահմանում է ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները, որոնցից տարեկան ժողովի

բացառիկ իրավասություններն են.

1. տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.

Ընդ որում, այն դեպքում, երբ ընկերությունն ունի վերստուգիչ հանձնաժողով, ապա Տարեկան ժողովն իրավունք չունի հաստատել ընկերության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները՝ ընկերության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունների բացակայության դեպքում:

2. ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը.

Ընդ որում, այն դեպքում, երբ Տարեկան ժողովը որոշում է կայացնում ընկերության շահույթն մասնակիցների միջև բաշխելու մասին, ապա Տարեկան ժողովի որոշման մեջ պետք է նշվի նաև շահույթի և մասնակիցների միջև բաշխման ենթակա շահաբաժինների չափը:

III. Բաժնետիրական ընկերություններ

1. Տարեկան ժողովի հրավիրման ժամկետը.

Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «ԲԸ Օրենք») 66-րդ հոդվածի կարգավորումների համաձայն ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով, որը պետք է գումարվի կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց **ոչ ուշ, քան ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում**: Այսինքն, Տարեկան ժողովը պետք է գումարվի յուրաքանչյուր տարի մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում:

Ավելին, այն դեպքում, երբ սահմանված ժամկետում Տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել **միայն ընկերության լուծարման կամ Տարեկան ժողովին վերապահված հարցերը քննարկելու համար**: Նշված հարցերով հրավիրված ար-

տահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ Տարեկան ժողովին վերապահված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի:

2. Տարեկան ժողովի բացառիկ իրավասությունները.

ԲԸ Օրենքի 67-րդ հոդվածի համաձայն Տարեկան ժողովի իրավասություններն են.

1. խորհրդի անկայության դեպքում դրա քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում:¹
2. վերստուգող հանձնաժողովի անկայության դեպքում դրա անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, պայմանով որ այդ իրավասությունները վերապահված են ժողովին:²
3. ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Եթե ընկերությունում առկա է խորհուրդ, ապա Ընկերության տարեկան հաշվետվությունները և տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են նախնական հաստատման խորհրդի կողմից՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:

1. խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

2. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

ինչպես ՍՊԸ-երի դեպքում, բաժնետիրական ընկերությունների պարագայում նույնպես, այն դեպքում, երբ ընկերությունն ունի վերստուգիչ հանձնաժողով, ապա Տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությամբ:

Ավելին, բաց բաժնետիրական ընկերությունների պարագայում տարեկան ժողովի գումարման մասին հայտարարությունը պարտադիր ենթակա է հրապարակման <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Կազմված է 02.03.2026 թվականի դրությամբ:

Հեղինակների մասին

Լիլիթ Կարապետյան
Գործընկեր,
փաստաբան



Լիլիթ Կարապետյանն ընկերությունում ղեկավարում է Հայաստանում բիզնես հիմնելու և մրցակցության, ինչպես նաև բնապահպանական օրենսդրության համապատասխանության ուղղությունները: Ունի փաստաբանի արտոնագիր 2018 թվականից: Կոնցեռն Դիալոգի թիմին է միացել 2017 թվականին:

Նախկինում աշխատել է ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակում:

Լիլիթ Կարապետյանը մագիստրոսի (LLM) աստիճան է ստացել Անգլիայի Էքսեթեր համալսարանում միջազգային առևտրային իրավունք մասնագիտացմամբ: Նա դասավանդում է Հայաստանում ֆրանսիական համալսարանում, հանդիսանում է ICC հայաստանյան ազգային կոմիտեի Արբիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման հանձնաժողովի նախագահ:

Անի Մկրտումյան
Ավագ իրավաբան,
փաստաբան



Անի Մկրտումյանը մասնագիտացած է կորպորատիվ իրավունքի, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության ոլորտներում: Մասնավորապես, նա ներգրավված է ոլորտների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման ու ներկայացուցչության իրականացման աշխատանքներում: Ունի փաստաբանի արտոնագիր 2023 թվականից: Կոնցեռն Դիալոգի թիմին է միացել 2021 թվականին:

Կոնցեռն Դիալոգ փաստաբանական գրասենյակը 1998 թվականից սկսած վստահելի գործընկեր է բիզնեսների և անհատների համար իրավաբանության բոլոր ոլորտներում խորհրդատվությունից մինչև դատական պաշտպանություն: Ընկերությունը ճանաչված է կորպորատիվ իրավունքի, աշխատանքային իրավունքի, մրցակցության իրավունքի, հարկային իրավունքի, պայմանագրային իրավունքի, լիցենզիաների ու թույլտվությունների, ընտանեկան իրավունքի (ներառյալ երեխաների անդրսահմանային առևանգման /child abduction/) ոլորտների պրակտիկայով: Մասնավորապես, մենք մեծ փորձ ունենք SS, հեռահաղորդակցության և մեդիայի, հանքարդյունաբերության, էներգետիկայի, կոմունալ ծառայությունների, բանկային և ֆինանսական, առողջապահության, անշարժ գույքի և ոչ առևտրային գործունեության ոլորտներում: Կոնցեռն Դիալոգի դատավարական փորձառությունը ՀՀ-ում առաջատարներից է, հատկապես բարդ քաղաքացիական, վարչական և արբիտրաժային գործերով: Փաստաբանական գրասենյակի անդամակցությունը TagLaw և Nextlaw ցանցերին և համագործակցությունն առանձին երկրներում գործով տեղական իրավաբանական կազմակերպությունների հետ թույլ է տալիս բարձրորակ ծառայություններ մատուցել հաճախորդներին փաստացիորեն ամբողջ աշխարհում: